№ 182 Հոկտեմբերի 1 (13) 1881 Հոկտեմբերի 1 (13) № 182

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 բուբլ, կէս տարվանը 6 բուբլ։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

ուստարարագրացիր դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն վերուց։

Յայտարարութիւնների համար վճարում են
իրաքանչիւր տաբին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մշտական անհոգութիւն։—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Նամակ Ախալցխայից։ Ներքին լուրեր։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Ամերիկա։ Անգլիա։ Արտաքին լուրեր։—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ։—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։ — ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։— ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ։ Կեանքի ազատողը։

ՄՇՏԱԿԱՆ ԱՆՀՈԳՈՒԹԻՒՆ

—

Մեր հասարակութեան գլխաւոր պակասութիւնը մշտական անհոգութիւնն է դէպի ամեն հասարակական երեւոյթները։ Մենք սկսում ենք մտածել այս կամ այն բարւոքման վրա միայն երբ մի որ և է վտանգ է սպառնում մեզ։

Մինչև որ չէ յայտնվում, օրինակ, մի որ և է վարակիչ հիւանդութիւն, մենք անմաքուր գրութեան մէջ ենք պահում մեր քաղաքները և գիւղերը, չենք հոգում փոդոցների մաքրելու մասին, ջրանցքներ անցկացնելու մասին, և այլն։ Բայց հէնց որ յայտնվում է մի որ և է վարակիչ հիւանդութիւն, օրինակի համար տ ի ֆ, կամ մի այլ աղտ, անմիջապէս կամենում ենք կարճ ժամանակում գրատել մեր այն բոլոր պակասութիւնները, որոնց մասին չէինք հոգում տարիների ընթացքում։

Հրաշքներ չէ կարելի գործել, չէ կարելի մի քանի շաբաթվայ մէջ վերցնել այն պակասութիւնները, որոնց դրատելու համար հարկաւոր է տարիների անընդհատ, անխոնջ, տոկուն աշխատանք, մշտական հոգացողութիւն, անընդհատ վերահսկողութիւն։

Այդպէս է եղել վերջին ռուս-թիւրքական պատերազմի ժամանակ, երբ յայտնվեցան մեր երկրում այլ և այլ վարակիչ հիւանդութիւններ։ Տարիների ընթացքում մեր քաղաքներում և գիւղերում դիզված աղբը, միշտ անմաքուր պահված մեր արտաքնոցները մենք ուզեցինք մի անգամից մաքրել. տասնեակ տարիներով մեր բնակութիւնների ապականվող օդը մենք մի քանի շաբաթվայ մէջ ուզեցինք առողջացնել։ Երբէք չը հոգալով մաքուր ջրի մասին, չունենալով ոչինչ ջրանցքներ, կամ չուզենալով օգուտ քաղել արդէն եղածներից և միշտ խմելով անմաքուր, կեղտոտ ջուր, մենք, վտանգը յայտնվելուն պէս, յանկարծակի ուզեցինք ունենալ և ջրանցքներ և մաքուր ջուր։

Բայց դժբաղդութիւնն այն է, որ ինչպէս մենք շուտ յափշտակվում ենք և վառվում, այնպէս էլ շուտ սառչում ենք։ Վտանգը անցնելուն պէս, մենք կրկին ամեն բան մոռացանք։ Թիֆլիսեցիներս շարունակեցինք չը մաքրել մեր փոդոցները, չառողջացնել մեր օդը, շարունակեցինք խմել զզուելի թուլուխների անմաքուր, սպանիչ ջուրը։ Մենք երազում ենք մեծ ջրանցք անցկացնել, բայց օգուտ չենք քաղում արդէն եղած ջրանցքից, որ իր մասնաւոր միջոցներով, առանց ոչոքից օժանդակութիւն ստանալու անց է կացրել պ։ Կորգանովի։ Մեր քաղաքային վարչութիւնը մեծ մեծ պլաններ է շինում մեր քաղաքի մէջ եւրոպական ձևով ահագին ջրանցք անցկացնելու, բայց եղած ջրանցքից օգուտ չէ կամենում քաղել, նիւթապէս օժանդակելով արդէն եղած մասնաւոր ձեռնարկութեանը։

Լրագրական թղթակցութիւնների մէջ անպատեր գանգատներ էինք կարդում Երեւանի քաղաքային վարչութեան անհոգութեան մասին։ Ինչպէս երեւում է այնտեղ էլ, մինչև վտանգը չը յայտնվի, ոչ ոք չի հոգայ ոչ մաքուր ջրի, ոչ էլ քաղաքի օդի, փոդոցների և արտաքնոցների մաքրութեան մասին, վերջապէս, ինչպէս առհասարակ ասում են, քաղաքը առողջացնելու մասին։ Բայց այժմ Երեւանում էլ վտանգ է յայտնվել, որ միակ ունի մեր վերաբերութեամբ դիւթական այժ, գոնէ ժամանակաւորապէս արթնացնել մեզ մեր խոր քնից, մեր սպառնիչ անտարբերութիւնից, մեր մշտական անհոգութիւնից։ Այդ վտանգը վարակիչ հիւանդութիւնն է, ասիին է, որ յայտնվեցաւ այժմ Երեւանի նահանգում, և որից, որքան մեզ յայտնի է, մեռնում են ոչ թէ միայն քաղաքում, այլ և գիւղերում և. ոչ թէ միայն աւելի անաջող պայմանների մէջ ապրող գիւղացի՞և արուեստաւոր դասակարգի մարդիկ, բայց և ամենայայտնի ընտանիքների, ունեւոր, երիտասարդ անձինք, որոնց կեանքի պայմանները, ի հարկէ, աւելի աջող են, քան թէ հասարակութեան ստորին դասակարգի։

Մի՞թէ հիմա էլ չեն մտածի ասենիզացիայի և դեզինֆեկցիայի մասին, այսինքն երկիրը մաքրելու, առողջացնելու մասին, քաղաքները և գիւղերը մաքուր պահելու, ժողովրդին առողջ ջուր տալու մասին։

Եթէ առհասարակ չենք հոգում մեր մասին, գոնէ հոգայինք վտանգի ժամանակ։ Եթէ այդ էլ չանենք, կը նշանակէ բոլորովին զուրկ ենք հասարակական առաջին և ամենատարրական, բնական յատկութիւնից-անձնապաշտպանութեան զգացմունքից։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԱԽԱԼՑԽԱՅԻՑ

—

Սեպտեմբերի 9-ին

Վաղուց է որ պ. պ. հաշուառները ստացել են հոգեոր կառավարութիւնից երեցփոխան ցովհաննէս ագա Վանցեանի հազարաւոր թղթերը, բայց այդ թղթերումն էլ ոչինչ չը գտան եկեղեցու հաշիւների վերաբերութեամբ։ Բացի դրանից Վանցեանի երեք տարուայ սեպագրութեան տետրակներն էլ ժապաւենեալ մատեանների նման անգիր դուրս եկան։ Շատ մտածեցին, վիճեցին, խելքներին զոռ տուին յարգելի հաշուառները,—ոչ մի եզրակացութեան չը հասան, և խնդրեցին Վանցեանից որ նոր հաշիւ շինէ, ներկայացնէ, իրանք էլ ընդունեն։ Էֆֆէնդիմ, պ. պ. հաշուառներ. միթէ այդ շնորհն էլ ունէք, որ պիտի կարողանաք ոչինչից մի բան դուրս բերել. անգիր մատեաններից գրաւոր հաշիւներ շինել։ Ասացէք խնդրեմ. էլ ինչու համար եկեղեցու գումարից երեցփոխան Վանցեանին տարեկան 600 բուբլ առձիկ էիք տալիս. էլ ինչու համար նրան օգնական գրագիր էիք տուել, որի առձիկն էլ նոյնպէս եկեղեցու գումարից էիք տալիս։ Ո՞ր օրէնքի համաձայն էիք այդպէս կարգադրել։ Դէհ, հիմա աշխատեցէք, որ կարողանաք մի բան դուրս բերել։ Մեր եկեղեցիների երեք տարուայ եկամուտն էլ, ծախսն էլ Աստուծուն է յայտնի և Վանցեանին, ուրիշ ոչ ոքի։ Տարեկան 15—20 հազար բուբլ եկամուտ ունեցող եկեղեցու երեցփոխանութիւնը, որ այդպիսի անապահով մարդուն էիք հաստատել, ի հարկէ վերջը այսպէս էլ պէտք է լինէր. ով է մեղաւոր։ Դեռ պէտք է Վանցեանը պատրաստէ իր հաշիւը, այն ինչ հասարակութիւնը մի թղթով պահանջից հաշուառներից որ ոչ մի հաշիւ չը շինեն, և ընդհանուր ժողով անեն ու յայտնեն հասարակութեանը, որ Վանցեանը ոչ մի հաշիւ չունի։ Թէ ինչ նպատակ կայ հասարակութեան այդ կերպ պահանջի մէջ, մեզ յայտնի չէ, բայց կարծում ենք թէ պատուելի հաշուառները ժողովրդի կամքի հակառակ վարվելու իրաւունք չունեն։ Պ. պ. հաշուառները իրանց իրաւունքից բարձր համարեցին ընդհանուր ժողով անել, այլ հոգեոր կառավարութեանը յանձնեցին հասարակութեան թուղթը։ Հոգեոր կառավարութիւնն էլ աւելորդ համարեց ժողով անել և յայտնել հասարակութեան գործի հանգամանքը, այլ մի պատկառելի հրամանով «խստիւ պատուիրեց»

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԿԵԱՆՔԻ ԱԶԱՏՈՂԸ

—

Աշնան այն գեղեցիկ երեկոներից մինն էր, երբ մանաւանդ Ամերիկայում բնութիւնը այնպէս գեղխաբար պարգեւատրում է աքանչելի կախարդութիւնով. մի գեղեցիկ հագնված պարոն ճեմում էր այն ծառուղիների մէջ, որ տարածված էին Էրի լճի երկայնութիւնով, ոչ հեռու հռչակաւոր Նիագարի ջրվէժից։ Լճի տեսարանը շատ գեղեցիկ էր. նրա լայնատարած մակերեսոյթի վրա այնպիսի մի զով հոգմիկ էր փչում, որ զբօսնողը ինքը իրան հանգարտիկ երգելով, աննկատելի կերպով հեռանում էր մարդաբնակ վայրից։ Վերջապէս նա անցկացաւ մի այնպիսի նեղ ճանապարհով, որով հազիւ թէ անցնում էին զբօսնողները և ուր անբնակութեան պատճառով տիրում էր խորին լռութիւն։ Այս նկատելով, նա կամեցաւ յետ դառնալ, բայց յանկարծ նորա ականջին հասաւ մի խոր հառաչանք. նա ապշած կանգ առաւ և սկսեց շրջահայեաց։ Նա իր ներքնակողմում, լճի ափի վրա, մի թփի տակ, տեսաւ նըստած մի մարդ, որ ձեռին բռնելով ատրճանակը, երեում էր որ նրա օգնութեամբ կամենում էր վերջ դնել իր կեանքին։

Արագ և ճարպիկ ցայտումով, զբօսնողը, մի բոպէում յայտնվեցաւ դժբաղդի առաջ և խլեցն խլեց նրա ձեռքից ատրճանակը։ Անծանօթը այսպէս յանկարծ և անսպասելի կերպով բռնվելով, երկիւղից վեր թռաւ տեղից։—Պարոն, ինչպէս համարձակվեցաք, բացագանչեց նա։

—Ես իմ պարտաւորութիւնս եմ կատարում, սառնութիւնով պատասխանեց նա։—Բայց որովհետև ես կարծում եմ որ մենք միմեանց հետ փոքր ինչ կը խօսենք, այս պատճառով վատ չէր լինի եթէ նստէինք, որովհետև նստած խօսելը աւելի յարմար է։ Այս ասելով, նա տարածվեց խոտի վրա, մի և նոյն ժամանակ մի հարեւանցի հայեացք ձգելով դժբաղդի վրա։

Սա մի քսան և ութ տարեկան երիտասարդ էր, որ հագնված էր բաւականի հին շորերով, թէպէտ երեւում էր, որ երբեմն լաւն էին եղել։ Երիտասարդի կերպարանքը բաւական տխուր էր և կարծես նա զարմանում էր անծանօթի այս կերպ պարզ վարվողութիւնից, բայց այն յուսահատվածի հետ սրանից աւելի վատ ինչ կարող էր պատահել։ այս պատճառով նա էլ նստեց խոտի վրա և հետաքրքիր կերպով սկսեց նայել անծանօթին։

—Դուք կամենում էիք վերջ տալ ձեր կեանքին, աշնանային այսպիսի մի աքանչելի երեկոյեան պահուն, սկսեց եկողը։—Մթթէ չարժէ նա, որ դուք ընծայել էիք նորան ձեր կեանքը։

Երիտասարդը քանի մի բոպէ տարուբերվում էր մեծ չփոթութիւնից։ Կեանքս ինձ անտանելի է դարձել և կարծում եմ որ շատ լաւ կը լինէր, եթէ միայն ազատվէի նրանից, ասաց նա, վերջապէս։

—Յայտնի բան է, որ նա, ով որ աշխարհիս համար ամենևին պէտքական չէ և միայն արգելում է ուրիշներին, սառնութիւնով պատասխանեց նրան խոտակիցը,—նա շատ լաւ կը վարվէր, եթէ մաքրէր ճանապարհը։ Աւելորդ մարդիկը ամենավտանգաւոր անդամներ են մարդկութեան համար։—Եւ այս ասելով նա սկսեց կատակաբար ատրճանակիցը հանել մի փամփուշտը մուսի ետևից և ածել նրանց լիմը։

—Բայց այստեղ ամենայնիւ, դուք ինձ արգելում էք կատարելու իմ դիտաւորութիւնս, նկատեց երիտասարդը։

—Իսկ և իսկ այդպէս է, պատասխանեց նա, որովհետև ես այն կարծիքի եմ, որ իր սեփական գործերի մէջ, ոչ ոք չէ կարող իր դատաւորը լինել և մինն էլ այն պատճառով, որ ես միշտ մըտածել եմ և բարւոք համարել որ, ինքնասպաններին համար լաւ կը լինէր եթէ սահմանէին մի առանձին դատարան, այնպէս որ, իրաքանչիւրը որ կամենում էր անձնասպան լինել՝ գար դատարանը և բացատրէր նրան իր դրութիւնը։ Այնուհետև, եթէ դատարանը կը տեսնէր որ, անձնասպանութիւն կամեցողը այնպիսի մի մարդ է, որի հետ ոչինչ չէ կարելի գործել և այն աստիճանի անպիտան է, որի մահվանը՝ ոչ ոք ոչինչ չի կորցնի, նրան նա իրաւունք կը տար վերջացնել իր կեանքը և մինչև անգամ կը հոգար էլ նրա թաղման մասին, իրեն ոչինչ հոգս չը պատճառելու համար։

Զը նայելով իր տխուր տրամադրութեանը, երիտասարդը այս օտարոտի խօսքը լսելուց յետոյ, չը կարողացաւ զսպել իր ժպիտը, որը նկատեց և ստարականը։

—Այո, շարունակեց նա—այս է իմ միտքս, որովհետև ես իմ երիտասարդ ժամանակս իրաւաբան էի, այսինքն նոտարի պաշտօն էի վարում մի փաստաբանի մօտ Պէնսիլվանիայում, մինչև որ կը որոնէի ինձ համար պարապելու մի այլ ասպարէզ։ Բայց ես դեռ ես չեմ վերջացրել իմ մտածած դատարանի մասին խօսքս։ Լաւ և այն գաղափարի եմ որ, անձնասպանների համար սահմանված դատարանը չը պէտք է վճռի վերջ դնել այնպիսիների կեանքին, որ արդէն ձանձրացել են կեանքից։

Շատ անգամ մարդիկ որ և է բանի վրա շատ մութ հասկացողութիւն ունեն, որի պատճառը լինում է գլխի արեան հոսանքը և մաքուր օդի պակասութիւնը. ես փոքր ի շատ տեղեկութիւն ունեմ և բժշկականութեան վրա, որովհետև մինչև իրաւաբանութեան պաշտօն ընդունելս, Նիւ-Յորկում, դեղատների գործարանում, օգնականի պաշտօն էի վարում։ Բայց չը հեռանանք մեր խօսքից. ես խօսում էի նրանց մասին, որոնց դատարանը թոյլ չը պէտք է տայ անձնասպան լինելու, եթէ միայն կարելի լինէր համոզվել, որ նա այն աստիճան անօգուտ չէ, որ նորա ապագայի մասին չէ կարելի յուսահատվիլ, որ հարկաւոր է նրան միայն պահպանել հարկաւոր եղածին չափ։ Դատարանը այս հանգամանքում կարող էր մեծ օգնութիւն հասցնել։ Երեւակայեցէք ձեզ, որ արդէն գոյութիւն ունի այդպիսի մի դատարան, ուր ես դատաւորի պաշտօն եմ վարում և դուք էլ ներկայանում էք ինձ ինչպէս անձնասպանի-տեղապահ։ Ի՞նչ կը պատմէիք դուք ինձ ձեր մասին։

—Շատ սակաւ բան, պատասխանեց երիտասարդը։ Ես բաւական հարուստ ծնողաց զաւակ եմ. իմ հայրս, որ Ֆիլադէլֆիայում երեւելի կաշեվաճառ էր, բոլոր արեմուտքի հետ հաղորդակցութիւն ունէր իր վաճառականութիւնով և մա-

---

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԿԵԱՆՔԻ ԱԶԱՏՈՂԸ

—

Աշնան այն գեղեցիկ երեկոներից մինն էր, երբ մանաւանդ Ամերիկայում բնութիւնը այնպէս գեղխաբար պարգեւատրում է աքանչելի կախարդութիւնով. մի գեղեցիկ հագնված պարոն ճեմում էր այն ծառուղիների մէջ, որ տարածված էին Էրի լճի երկայնութիւնով, ոչ հեռու հռչակաւոր Նիագարի ջրվէժից։ Լճի տեսարանը շատ գեղեցիկ էր. նրա լայնատարած մակերեսոյթի վրա այնպիսի մի զով հոգմիկ էր փչում, որ զբօսնողը ինքը իրան հանգարտիկ երգելով, աննկատելի կերպով հեռանում էր մարդաբնակ վայրից։ Վերջապէս նա անցկացաւ մի այնպիսի նեղ ճանապարհով, որով հազիւ թէ անցնում էին զբօսնողները և ուր անբնակութեան պատճառով տիրում էր խորին լռութիւն։ Այս նկատելով, նա կամեցաւ յետ դառնալ, բայց յանկարծ նորա ականջին հասաւ մի խոր հառաչանք. նա ապշած կանգ առաւ և սկսեց շրջահայեաց։ Նա իր ներքնակողմում, լճի ափի վրա, մի թփի տակ, տեսաւ նըստած մի մարդ, որ ձեռին բռնելով ատրճանակը, երեում էր որ նրա օգնութեամբ կամենում էր վերջ դնել իր կեանքին։

Արագ և ճարպիկ ցայտումով, զբօսնողը, մի բոպէում յայտնվեցաւ դժբաղդի առաջ և խլեցն խլեց նրա ձեռքից ատրճանակը։ Անծանօթը այսպէս յանկարծ և անսպասելի կերպով բռնվելով, երկիւղից վեր թռաւ տեղից։—Պարոն, ինչպէս համարձակվեցաք, բացագանչեց նա։

—Ես իմ պարտաւորութիւնս եմ կատարում, սառնութիւնով պատասխանեց նա։—Բայց որովհետև ես կարծում եմ որ մենք միմեանց հետ փոքր ինչ կը խօսենք, այս պատճառով վատ չէր լինի եթէ նստէինք, որովհետև նստած խօսելը աւելի յարմար է։ Այս ասելով, նա տարածվեց խոտի վրա, մի և նոյն ժամանակ մի հարեւանցի հայեացք ձգելով դժբաղդի վրա։

Սա մի քսան և ութ տարեկան երիտասարդ էր, որ հագնված էր բաւականի հին շորերով, թէպէտ երեւում էր, որ երբեմն լաւն էին եղել։ Երիտասարդի կերպարանքը բաւական տխուր էր և կարծես նա զարմանում էր անծանօթի այս կերպ պարզ վարվողութիւնից, բայց այն յուսահատվածի հետ սրանից աւելի վատ ինչ կարող էր պատահել։ այս պատճառով նա էլ նստեց խոտի վրա և հետաքրքիր կերպով սկսեց նայել անծանօթին։

—Դուք կամենում էիք վերջ տալ ձեր կեանքին, աշնանային այսպիսի մի աքանչելի երեկոյեան պահուն, սկսեց եկողը։—Մթթէ չարժէ նա, որ դուք ընծայել էիք նորան ձեր կեանքը։

Երիտասարդը քանի մի բոպէ տարուբերվում էր մեծ չփոթութիւնից։ Կեանքս ինձ անտանելի է դարձել և կարծում եմ որ շատ լաւ կը լինէր, եթէ միայն ազատվէի նրանից, ասաց նա, վերջապէս։

—Յայտնի բան է, որ նա, ով որ աշխարհիս համար ամենևին պէտքական չէ և միայն արգելում է ուրիշներին, սառնութիւնով պատասխանեց նրան խոտակիցը,—նա շատ լաւ կը վարվէր, եթէ մաքրէր ճանապարհը։ Աւելորդ մարդիկը ամենավտանգաւոր անդամներ են մարդկութեան համար։—Եւ այս ասելով նա՝ սկսեց կատակաբար ատրճանակիցը հանել մի փամփուշտը մուսի ետևից և ածել նրանց լիմը։

—Բայց այստեղ ամենայնիւ, դուք ինձ արգելում էք կատարելու իմ դիտաւորութիւնս, նկատեց երիտասարդը։

—Իսկ և իսկ այդպէս է, պատասխանեց նա, որովհետև ես այն կարծիքի եմ, որ իր սեփական գործերի մէջ, ոչ ոք չէ կարող իր դատաւորը լինել և մինն էլ այն պատճառով, որ ես միշտ մըտածել եմ և բարւոք համարել որ, ինքնասպաններին համար լաւ կը լինէր եթէ սահմանէին մի առանձին դատարան, այնպէս որ, իրաքանչիւրը որ կամենում էր անձնասպան լինել՝ գար դատարանը և բացատրէր նրան իր դրութիւնը։ Այնուհետև, եթէ դատարանը կը տեսնէր որ, անձնասպանութիւն կամեցողը այնպիսի մի մարդ է, որի հետ ոչինչ չէ կարելի գործել և այն աստիճանի անպիտան է, որի մահվանը՝ ոչ ոք ոչինչ չի կորցնի, նրան նա իրաւունք կը տար վերջացնել իր կեանքը և մինչև անգամ կը հոգար էլ նրա թաղման մասին, իրեն ոչինչ հոգս չը պատճառելու համար։

Զը նայելով իր տխուր տրամադրութեանը, երիտասարդը այս օտարոտի խօսքը լսելուց յետոյ, չը կարողացաւ զսպել իր ժպիտը, որը նկատեց և ստարականը։

—Այո, շարունակեց նա—այս է իմ միտքս, որովհետև ես իմ երիտասարդ ժամանակս իրաւաբան էի, այսինքն նոտարի պաշտօն էի վարում մի փաստաբանի մօտ Պէնսիլվանիայում, մինչև

հաշուառեսներին, որ «յընթացս մեոյ եօթնեկի» պատրաստեն հաշիւը և յանձնեն իրան։ Հոգեոր կառավարութիւնը չէր մտածել թէ ինքը հապիւ 15 օրում կարողացաւ այդ անպէտք թղթերը վաւերացնել. հիմա էլ պահանջում է որ մի շաբաթում հաշիւ պատրաստվի։ Զարմանալի բան։ Եթէ հոգեոր կառավարութիւնը քիչ մը նեղութիւն քաշէր, ծանօթանար այդ թղթերի բովանդակութեան հետ, այդ անտեղի հրամանը չէր գրի։ Հաշուառեսներն էլ յայտնեցին, որ ոչ թէ մի եօթնեակում, այլ եօթանասուն և եօթը եօթնեակում էլ ոչինչ չէ կարելի շինել, որովհետև մէջտեղում ոչինչ չը կայ և խնդրեցին որ այս մասին յայտնվի ուր հարկն է։ Ահաւասիկ այս վիճակումն է մեր եկեղեցիների երեք ամեայ հաշուառեսութեան գործը. տեսնենք հոգեոր իշխանութիւնը ինչ կը տնօրինէ։

Օտարական

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Այսօր ոչն լինելով, վաղը, ուրբաթ օր, «Մշակի» համարը չի հրատարակվի։ Հետևեալ համարը կը հրատարակվի շաբաթ օր։

«Մշակի» ներկայ համարում տպում ենք «Կեանքի ազատող» վէպը, որ թարգմանել է Արշակ քահանայ Տէր-Ստեփանեան։

Մեզ գրում են ՍՂՆԱԽԻՑ, որ այդ քաղաքից 20 վերստ հեռու գտնվող Մէջան գիւղում քանի մի շաբաթ է արդէն որ յայտնվել է տաւարի հիւանդութիւնը։ Կենդանիների վրա յայտնվում են խոցեր, որոնցից կենդանին ուտակում է։ Ցաւարների տաս պրոցէնտը (այսինքն հարիւրից տասը) կոտորվում են։

Ցաւանում ենք այն բոլոր անձանց, որոնք փող ուղարկեցին յօգուտ «Ժուրնալ դ'Օրիան» լրագրի, մի և նոյն ժամանակ յայտնելով իրանց ցանկութիւնը ստանալ ֆրանսիական թերթը, որ մենք արդէն հաղորդեցինք նրանց ադրէսները Վիէննայի լրագրի խմբագրութեանը։

Մեզ գրում են ԵՐԵՒԱՆԻՑ հետևեալը։ «Մի տիկին հրաւիրված լինելով իր ազգականուհու երեխայի մկրտութեան հանդիսին, վեր է առնում իր հետ իր մի տարեկան մի հատիկ փոքրիկ աղջկան։ Ցննդկան ազգականուհու տունը գալով, տիկինը թողնում է երեխային այդ վերջինի մօտ, իսկ ինքն գնում է ճաշի պատրաստութիւնը տեսնելու։ Երեխան լաց է լինում, այն ժամանակ ծննդկանը նրան հանգստացնելու համար, սկսում է նրան ծիծ տալ։ Բայց մանուկը ծընդկանի թանձր, խէժոտ կաթը ծծելուց յետոյ անմիջապէս հիւանդանում է։ Խեղճին խսկոյն տանում են բժշկի մօտ, բայց բժիշկը անկարող է լինում փրկել երեխային, որ երկու օրից յետոյ վախճանվում է։»

ՍՂՆԱԽԻՑ մեզ գրում են հետևեալը։ «Տեղիս վրացի իշխանները սովորութիւն ունեն իրանց անտառից փայտ դուրս բերելու իրաւունքի համար որոշեալ վճարով տոմսակներ բաժանել գիւղացիներին և այնուհետև մի և նոյն իշխանների ազգականները անտառի մէջ պատահելով տոմսակ ունեցող փայտ կտրողներին, ծեծում են նրան և խլում են նրանցից թէ գրատները և թէ այլ պարագաներ։ Դէպերումս էլ մի քանի իշխաններ որս անելու ժամանակ պատահելով անտառում այդ տեսակ տոմսակ ունեցող գիւղացիներին, դեռ խօսքով սկսում են համոզել նրանց հրաժարվել փայտ կտրելուց, բայց երբ սրանց կողմից ընդդիմադրութեան են հանդիպում, սկսում են արձակել գիւղացիների վրա պիրօղի հրացաններից և սպանում են մի էշ։ Այն ժամանակ գիւղացիք զայրանալով, խլում են իշխաններից հրացաններ և լաւ ծեծելուց յետոյ, արձակում են նրանց։»

Շնորհակալութեամբ ստացանք բժիշկ Լեոն Տիգրանեանից նրա հեղինակութիւնը «Մարդկազմութիւն» վերնագրով։ Գիրքը տպված է Երևանում, «Գսակ» լրագրի տպարանում, ներկայ 1881 թվին։ Գրքի գինը 50 կոպէկ է և ծախվում է Թիֆլիսում կենտրոնական գրավաճառանոցում։ Ցանկացողները կարող են դիմել նոյնպէս Երևան, իրան հեղինակին, հետևեալ հասցէով. Городскому врачу, Леону Тигранянуъ Эривань. Այդ գրքի մասին մենք յոյս ունենք «Մշակի» հետևեալ համարներից մինում աւելի մանրամասնօրէն խօսելու։ Այստեղ կասենք միայն այն, թէ ցանկալի է որ մեր բոլոր համալսարանական երիտասարդութիւնը աշխատասիրութեան և եռանդի մէջ օրինակ առնէր «Առողջապահական թերթի» խմբագրից։

Այս օրերս ստացվեցաւ Թիֆլիսում մեր գիտնական հայրենակից պ. Լեոնի ռուսերէն բրոշիւրը, որ գրված է Թիֆլիսի հնագիտական ժողովին ներկայացրած լինելու համար և որ կը բերում է հետևեալ վերնագիրը. «Моисей Хоренскій и древній эпосъ Армянскій.» Գրքոյկը, որ արժէ 1 բուբլ, ծախվում է «Մշակի» խմբագրատանը և կենտրոնական գրավաճառանոցում։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՄԵՐԻԿԱ

Սեպտեմբերի 24-ին նախագահ Գարֆիլդի մարմինը տեղափոխող երկաթուղու գընացքը կամաց մօտեցաւ Պենվիլենդի կայարանին։ Գնացքը զարդարված էր սև և ըսպիտակ զարդերով, իսկ վագոնների մէջ սև մահուդ էր փռած։ Գնացքի առաջ գտնվում էր Գարֆիլդի մեծ պատկերը ամերիկական դրօշակի հովանաւորութեան տակ։ Մինիստրութեան անդամները վագոններից դուրս գալուց յետոյ գլխաբաց կանգնած էին, մինչև տիկին Գարֆիլդ նստեց իր կառքի մէջ։ Տասներկու թնդանօթաձիգները նախագահի մարմինը դրին կառքի վրա, որ կառավարում էին չորս նեգրներ։ Մի և նոյն նեգրները 16 տարի առաջ տեղափոխեցին Լինկոլնի մարմինը։ Ճանապարհի վրա կանգնել էին բոլոր բնակիչները։ Գաղային հեռևում էին Գարֆիլդի հրամանատարութեան տակ եղած զինուորներից 100 մարդ։ Բոլոր փողոցների վրա սև գորգեր էին կպցրած և իւրաքանչիւր տան մէջ երևում էր Գարֆիլդի պատկերը։ Զը նայելով, որ յուղարկաւորութեանը հարիւր հազարաւոր մարդիկ էին մասնակցում, բայց կատարեալ լռութիւն էր տիրում, որ ընդհատվում էր եկեղեցիների զանգահարութեամբ։ Գարֆիլդի գերեզմանը Կլիվլենդի շրջականներից ամենաբարձր կէտի վրա է գտնվում, որտեղից երևում են մի քանի լճեր և այն տեղը, որտեղ Գարֆիլդ անց է կացրել իր երիտասարդութիւնը։

Քաղաքական գործերի վերաբերութեամբ կատարեալ հանգստութիւն է տիրում։ Ամենքը զգում էին, որ պէտք է բոլոր գործերը յետաձգել մինչև Գարֆիլդի թաղումը։ Նախագահ Արտերին ամենքը խորհուրդ են տալիս զգուշութեամբ գործել և նա հեռևում է այդ խորհուրդներին։ Նա յայտնեց կառավարութեան անդամներին, որ առ ժամանակ նա կը զբաղվի ամենատրաժեշտ գործերով, որպէս զի մինիստրները հանգստանալու ժամանակ ունենան։ Ընդհանուր կարծիքի համեմատ Արտեր ըզգում է իր մեծ պատասխանատուութիւնը երկրի առաջ։

Գիտօի դատաստանական գործը նոյեմբերից շուտ չի սկսվի։ Շատ քաղաքներում յանցաւորի պատկերը հասարակական անարգանքի և մահուան պատժի ենթարկեցին։ Ինքը յանցաւոր Գիտօ շատ բաւական է իրանից և բոլորովին չէ զղջում։ Նա հաւատացած է, որ իրան կարդարացնեն, երբ յուզմունքը կը վերջանայ, և մինչև անգամ իր կուսակցութենից վարձատրութեան է սպասում։ Գիտօ հաւատացնում է, որ Արտեր նրա բարեկամն է և նրան ներում կը շնորհէ։

ԱՆԳԼԻԱ

Եգիպտական դժուարութիւնների առիթով «Times» լրագրի մէջ տպված է հետաքրքիր նամակ մի թղթակցից, որ նոր է վերադարձել Արևելքից։ Թղթակիցը երկար տարիների փորձից և Արևելքը կատարելապէս ուսումնասիրելուց յետոյ հանում է հետևեալ եզրակացութիւններին։ „Աստրիան ձգտում է ձեռք բերել Զեվեզա և Սալոնիկի և պէտք է ստանայ թէ այդ նահանգիստները և թէ Էպիրոսը և Մակեդոնիան։ Հէնց որ այդ նահանգները Աստրիայի իշխանութեան տակ կը լինեն, Յունաստանը կենթարկվի նրա հովանաւորութեանը, իսկ յոյների համար իրանց ցեղական կատարեալ միութիւնը կայացնելու համար միակ միջոց է ճանաչել Աստրիայի գերիշխանութիւնը։“ Թղթակիցը այդ կարծիքը ջերմ պաշտպանում է, գովելով Աստրիայի քաղաքականութիւնը, որը, նրա կարծիքով, բացի Անգլիայից մեացած բոլոր պետութիւններից աւելի հետաքրքրված է Միջերկրական ծովի արևելեան մասի գործերի դրութեամբ։ „Հէնց որ Կ. Պոլսի վիճակը վճռված կը լինի, շարունակում է թղթակիցը, դրա հետևանքը այն կը լինի, որ Յունաստանը Աստրիայից կախումն կունենայ և վերջինը առանց պատերազմի կը գրաւէ Էգէյան ծովի հիւսիսային ափերը։ Եթէ Աստրիան այնքան խոհեմ կը լինի, որ կապահովէ յոյների ազգային անկախութիւնը գրաւելով նրան մի նամակ գրեցի, որ սերտուկիս գրպանում կը գտնեն և որի մէջ ես դարձեալ բացատրում եմ իմ դրութիւնս։ յայտնում եմ նրան իմ վերջին յուսահատութիւնս և խնդրում եմ ինձ մոռանալ, որ այն ստուերը, որ ձգեցի ես նրա մատաղ կեանքի վրա շուտով անհետանայ։

—Իրաւ, բաղդը խաբելն է վարվել ձեզ հետ պատասխանեց նրան անծանօթը— Ո՞ւր է ձեր գրած նամակը օրիորդ Եղիսաբէթին։

Թշուառականը հանեց նամակը իր գրպանից և տուեց իր խօսակցին, որը կարդաց հասցէն։—Թոյլ տուէք ինձ, որ ինքս կարդամ սրա մասին, երբ որ հարկաւորութիւնը կը պահանջի, ասաց նա պահելով նամակը իր գրպանում—կարելի է սա փոքր ինչ ժամանակ մնայ ինձ մօտ, որովհետև ես կամենում եմ ձեզ մի առաջարկութիւն անել։ Որովհետև դուք արդէն վճռել էք մեռնել, ես կարծում եմ որ ձեզ համար մի և նոյն կը լինի, ինչ ճանապարհով և մեռնէք դուք. եթէ մանաւանդ այդ միջոցը խորթ չի երևայ ձեզ իր անյարմարութիւններով։ Ընդհակառակն, ձեզ գուցէ և հաճելի կը լինի ցոյց տալ մի յայտնի քաջագործութիւն և մինչև անգամ հերոսութիւն, քան թէ այստեղ արձակել գնտակը ճակատին՝ մի ամենահասարակ կերպով։ Բանը նրա մէջն է,- որ ես յայտնի լարախաղացն եմ, կամ ինչպէս որ ասում է կինս՝ էկվիլիբրիստ Բլօնդէն։

—Հրաշակաւոր, անվնեռ Բլօնդէնը, բացականչեց ապարտված երիտասարդը։

—Հէնց նա, ուստնութիւնով պատասխանեց Բլօնդէնը։ Ինչպէս որ ձեզ արդէն յայտնի է, անց էի նաւանդ Եւրոպային հասցնում էր շատ ապրանք։ Նա սրանով բաւական հարստացաւ, բայց իմ գործս այն ժամանակ աւելի յաջող կերթար՝ եթէ որ նա շուտ չը վախճանվէր։ Երբ որ ես տասը տարեկան լրացայ, նա հարիւրով հիւանդացաւ և երեք օրից յետոյ վախճանվեցաւ։ Այս բանը իմ մօտս վրա այնպէս ներգործեց՝ որ նա ես ուզեցի բոլորովին հիւանդացաւ և մի եօթներեակում հետևեց հօրս։ Ինձ համար մի հոգարարձու նշանակեցին, որ մի խաբեբայ մարդ երևեցաւ վերջը. նա ինձ այնպէս կողոպտեց, որ համարեա ոչ ոք չը նկատեց այս, բայց վերջապէս երբ որ նրա գործը երևեցաւ՝ այն ժամանակ արդէն իմ ունեցածիս մեծ մասը սպառված էր։ Ինձ այն ժամանակ ուսումն տուեցին և այնուհետև Նիւ-Յորկում մտայ մեծ առևտրական տանը։ Հասակս առնելուն պէս ինձ իմ մեռացած կարողութիւնից յանձնեցին մի փոքրիկ գումար. ես էլ իմ կողմից աշխատում էի մեծ խնայողութեանս շնորհիւ աւելացնել նրան փոքր ինչ գումար, որ կարող լինէի նրանով ինձ համար մի առանձին գործ սկսել։ Իմ կեանքս աւելի հետաքրքրական դարձաւ նրանով, որ նոյն միջոցին ծանօթացայ մի մատաղահաս օրիորդի հետ, որ որքան գեղեցիկ էր՝ նոյնքան և բարի։ Մենք մի կիրակի օր ճաշից յետոյ միմեանց հանդիպեցանք ջրեզերքին, այնուհետև մի քանի անգամ դարձեալ տեսնվեցանք զբօսարանում և միմեանց աւելի ու աւելի հաճայանում էինք և վերջապէս Եղիսաբէթը դարձաւ իմ նշանածս։ Նա շատ հմուտ օրիորդ է և իր աշխատանքին է պարտական իր կենցաղավարութիւնով. նա շատ գեղեցիկ է նկարում և այս պատճառով շատ առևտրական տների համար աքանչելի կերպով պատրաստում էր հովհարների, փոքրիկ սեղանների համար զանազան նկարներ և այլ բաների ձևեր. նրան այս աշխատանքի համար լաւ էին վարձատրում և որովհետև նա էլ ինձպէս խնայող էր՝ այս պատճառով ապագայի համար նա էլ էր պահում մի փոքրիկ մասը այն գումարից։ Մեր պահած փողերովը մենք մտածեցինք, որքան կարելի էր շուտով վարել, անկախ կեանք, բայց մեր բոլոր գումարի քանակութիւնը դեռ ես բաւական չէր, որ և է օգտակար գործ այնպէս որ մենք շատ ուրախացանք սկսելու համար, երբ ծանօթացանք մի քաղցր երիտասարդ վաճառականի հետ, որ իրեն ցոյց տուեց իրրև մի պատուական մարդ և ցանկութիւն յայտնեց ինձ հետ ընկերանալու մի որ և է գործ սկսելու համար։ Ուրախութիւնից ես թեթևամտաբար հաւատում էի միստր Ֆրէնդլիսի (այսպէս էր նրա անունը) բոլոր առաջարկութիւններին, թողեցի իմ տեղս և սկսեցի մեր ձեռնարկելի գործի համար պատրաստութիւններ տեսնել։ Մեր ձեռնարկած գործը մաթեմատիկական էր։ Շինութիւն սկսեցի վարձել և պայմանագրերով անգամ կապվեցայ զանազան անձանց հետ ապրանքս հասցնելու համար. իսկ Ֆրէնդլիսը, ինչպէս որ ինքը հաւատացնում էր՝ լաւ տեղեակ էր արտասահմանեան առևտրականութեան հետ և սկսեց մեծ թղթակցութիւններ անել եւրոպական առևտրական տների հետ։ Իր փողերի մասին ինձ նա մի ընդհանուր տեղեկութիւն տուեց, որովհետև, ինչպէս նա ինձ ասում էր՝ իրեն դեռ այնպէս հեշտ չէր իր թղթերը փող դարձնելու, այս պատճառով ես գործը սկսելու համար յանձնեցի նրան իմ փողերս միւս առաւօտեան։ Հէնց որ փողերը ստացաւ, միանէր Ֆրէնդլիս անյայտացաւ։ ոչ թէ միայն իմ և նշանածիս փողերովը, այլ և իմ անունովս պարտք էր առել մեր գործակցութիւնը, ինչպէս որ միայն կարելի էր եղել։ Կարող էք երևակայել ձեզ իմ երկիւղս։ ես բոլորովին ոչնչացրած էի։ Այն ժամանակ միայն իմացայ, որ նրա բոլոր ասածները ստութիւններ էին, որ նա մի կոպէկ անգամ չէր ունեցել և որ այս դեռ առաջին խաբեբայութիւն չէր նրա կողմից։ Բայց նրա մեզ կողոպտելովը դեռ չը վերջացան մեր դժբաղդութիւնները. մեր ֆիրմայում առաջարկվեցան քանի մի պահանջողութիւններ, որոնց կատարելը ես անկարող էի, վրա նշանակվեցաւ կոնկուրս և ինձ մեղադրեցին դիտմամբ սնանկութեան մէջ և վճռեցին ինձ բանտարկել։ Ո՜հ, Աստուած, ինչ սարսափելի դրութիւն էր. ես այնտեղ մնացի քանի մի շաբաթ, մինչև անգամ ամիս։ Ո՞րքան անտանելի էր այդ ժամանակը իմ հարանացուիս համար, բայց մենք մտածում էինք մեր ազատութիւնից յետոյ փորձել դարձեալ նորից սկսելու մեր բաղդը։ Բայց այնպէս չեղաւ։ Երբ բանտից ազատվելուց յետոյ ես ինձ համար տեղ էի որոնում, ամեն տեղից բացասական պատասխան էի ստանում, որովհետև իմ մասին տեղեկութիւններ էին ժողովում և իմանալով որ իմ ֆիրման բացելով, ութ օրուան միջոցում սնանկացել էի՝ վախենում էին ինձանից։ Միով բանիւ ինձ համար ոչ մի տեղ չէր երևում։ Մինչև ցայսօր ինձ իմ հարանացուս էր կերակրում. բայց ես այլ ևս չեմ կարող տանել այս, չեմ կարող այսուհետև ես ծանրութիւն լինել այն անձնազոհ օրիորդին. այս պատճառով ես նրան մի նամակ գրեցի, որ սերտուկիս գրպանում կը գտնեն և որի մէջ ես դարձեալ բացատրում եմ իմ դրութիւնս։ յայտնում եմ նրան իմ վերջին յուսահատութիւնս և խնդրում եմ ինձ մոռանալ, որ այն ստուերը, որ ձգեցի ես նրա մատաղ կեանքի վրա շուտով անհետանայ։

—Իրաւ, բաղդը խաբելն է վարվել ձեզ հետ պատասխանեց նրան անծանօթը— Ո՞ւր է ձեր գրած նամակը օրիորդ Եղիսաբէթին։

Թշուառականը հանեց նամակը իր գրպանից և տուեց իր խօսակցին, որը կարդաց հասցէն։—Թոյլ տուէք ինձ, որ ինքս կարդամ սրա մասին, երբ որ հարկաւորութիւնը կը պահանջի, ասաց նա պահելով նամակը իր գրպանում—կարելի է սա փոքր ինչ ժամանակ մնայ ինձ մօտ, որովհետև ես կամենում եմ ձեզ մի առաջարկութիւն անել։ Որովհետև դուք արդէն վճռել էք մեռնել, ես կարծում եմ որ ձեզ համար մի և նոյն կը լինի, ինչ ճանապարհով և մեռնէք դուք. եթէ մանաւանդ այդ միջոցը խորթ չի երևայ ձեզ իր անյարմարութիւններով։ Ընդհակառակն, ձեզ գուցէ և հաճելի կը լինի ցոյց տալ մի յայտնի քաջագործութիւն և մինչև անգամ հերոսութիւն, քան թէ այստեղ արձակել գնտակը ճակատին՝ մի ամենահասարակ կերպով։ Բանը նրա մէջն է,- որ ես յայտնի լարախաղացն եմ, կամ ինչպէս որ ասում է կինս՝ էկվիլիբրիստ Բլօնդէն։

—Հրաշակաւոր, անվնեռ Բլօնդէնը, բացականչեց ապարտված երիտասարդը։

—Հէնց նա, ուստնութիւնով պատասխանեց Բլօնդէնը։ Ինչպէս որ ձեզ արդէն յայտնի է, անց էի